

Միքայել Մարտիրոսյան
Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

Հայկ Գրիգորյան

**ԼԵՐԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԵՎ ՀԱՍԱՍՏԱՎՈՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ
19-ՐԴ ԴԱՐԻ 60-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՍԿԶԲՆԵՐԻՆ**

19-րդ դարում Ռուսական կայսրության տարածքը շարունակում էր ընդարձակել: Նոր տարածքների նվաճմանը զուգահեռ՝ Ռուսական կայսրությունն արագորեն ինտեգրում էր դրանք¹: Այդ գործնթացում Ռուսաստանի կազմի մեջ մտնող ժողովուրդները գրկվում էին ոչ միայն վարչական ինքնավար իրավունքներից, այլև խաթարվում էր նրանց մշակութային գարգացումը: Բացառություն էին կազմում միայն Ֆինլանդիան և որոշ չափով Լեհաստանը:

Ռուսաստանում համասլավոնականության գաղափարախոսության ամրապնդման համար Ղրիմի պատերազմից հետո հիմք հանդիսացավ 1858 և 1868 թթ. Սուկվայի և Պետերբուրգի սլավոնական բարեգործական կոմիտեների ստեղծումը, որոնք վայելում էին պետական աջակցություն²: Այս կազմակերպությունները կարևոր դեր էին խաղում Ռուսաստանում սլավոնական միության գաղափարները տարածելու համար: Եթե նախկինում սլավոնական համերաշխության և միասնության գաղափարները համակարգված չէին, ապա այժմ դրանք ուղղորդվում էին մեկ կենտրոնից:

1867 թ. Ռուսաստանի Բնագիտության սիրահարների ընկերությունը կազմակերպեց Համառուսաստանյան ազգագրական ցուցահանդես և միաժամանակ հրավիրվեց սլավոնական ժողովուրդների համագումար, որը կառավարության անմիջական հովանավորության ներքո էր անցկացվում³:

Այս համագումարը մեծ ոգևորություն էր առաջացրել ռուսական հասարակական-քաղաքական որոշակի շրջանակներում, իսկ Պետերբուրգի բնակչությունը բավական շերմ ընդունեցին պատվիրակներին⁴: Համագումարին հրավիրվեցին նաև սլավոնական ժողովուրդների ներկայացուցիչներ, հանգամանք, որն առաջացրեց ավստրիական իշխանությունների գայրույթը: Ռուսական կառավարությունը մեղադրվեց Ավստրիայում և Թուրքիայում ապրող սլավոն ժողովուրդներին իրենց դեմ տրամադրելու մեջ: Ավստրիան փորձեց ռուսական իշխանություններին հակակռել ննանատիպ միջոցառման անցկացմանք Գալիցիայում: Անցկացման վայրը պատահական չէր ընտրվել: Հենց Գալիցիայում կազմակերպվելիք հավաքով Ավստրիան Ռուսաստանին սպառնում էր լեհական հարցով⁵:

Պետերբուրգի համագումարին ի նշան բողոքի լեհերը չնասնակցեցին, որոնց հիշողության մեջ դեռ թարմ էր 1863-64 թթ. ապստամբության դաժան ճնշումը:

¹ Տես Դյակին Վ. Ս., Национальный вопрос во внутренней политике царизма (XIX – начало XX вв.), СПБ. 1998, с. 15:

² Տես Նիկիտин Ս. Ա., Славянские комитеты в России в 1858-1876 гг., М. 1960., с. 31:

³ Տես Государственный архив Российской Федерации (այսուհետ՝ ГАРФ), Ф. 109 с/а, ои. 4 а, д. 413:

⁴ Տես ԳАՐՓ, Ф. 109 с/а, оп. 4 а, д. 413. л. 2:

⁵ Տես Նիկիտин Ս. Ա., նշվ. աշխ. էջ, 172:

Մինչ համագումարի կայանալը ռուսաց հասարակությունում արդեն լայնորեն տարածված էին համասլավոնականության գաղափարները, որոնք դրսորվում էին և ծայրահետ, և չափավոր տեսակետներով: Ցարական կառավարությունն ամեն ինչ անում էր, որ սլավոնական ժողովուրդները միավորվեն իր հովանու ներքո, և ռուսաց լեզուն սլավոնական բոլոր ժողովուրդների համար դառնա միավորիչ գործոն: Դեռ 1864 թ. համասլավոն ակադեմիկոս Վ. Ի. Լամանսկին ասում էր, որ ռուսաց լեզուն սլավոնական ութ բարբառներից միակն է, որը կարող է ստիպել մնացած բարբառներին ձերբագատվել կախյալ վիճակից¹: Լամանսկին այստեղ նկատի ուներ գերմանացման և մաջարացման երևույթները:

Բնականաբար, սլավոնական մնացած ժողովուրդները այս միտքը չէին կարող ընդունել: Նրանք մտավախություն ունեին, որ գործընթացն անմիջական ուտնագություն է իրենց մշակութային և քաղաքական ինքնուրույնության նկատմամբ: Չես պատմաբան և քաղաքական գործիչ Ֆ. Պալացկին շատ ծիշտ է նկատում, որ ոչ մի ազգ «չի լրի իր լեզուն» և չի դառնա «ռուսական հպատակ»²:

Փաստորեն, ռուսական կողմի բոլոր փորձերը՝ միավորել սլավոնական ժողովուրդներին մեկ գրական լեզվի հիվանու ներքո, տապալվեցին: Սա, այսպես կոչված, համասլավոնականության «գրական» քաղադրիչն էր:

Գոյություն ուներ նաև այս գաղափարախոսության «քաղաքական» քաղադրիչը: Ն. Յանիլսկին մշակեց պատմամշակութային օարգացման հայեցակարգ, համաձայն որի Ռուսաստանին ի սկզբանե տրված է եղել լինել ռոմանո-գերմանական քաղաքակրթության հակառակորդը: «Եվրոպան,- գրում է Դանիլսկին,- չի ընդունում մեզ, որպես իրենք: Նա Ռուսաստանին և սլավոններին դիտում է որպես օտար, դրա հետ միասին չի կարողանում ծառայեցնել իրեն, որից կունենա իր շահը»: Նա գտնում է, որ Ռուսաստանն այնքան մեծ է, հզոր, որ պետք է դառնա Եվրոպական ընդհանուր քաղաքակրթության քաղադրիչներից մեկը³:

Դանիլսկու հետ համամիտ չէր պատմաբան Ս. Մ. Սոլովյովը, որը գտնում էր, որ Ռուսաստանը Եվրոպական պետություն է, որը Պյոտր Առաջինի ժամանակներից առաջանալով դեպի ծովերը՝ դարձավ ժամանակակից Եվրոպայի անքաժան մասը: Ավելին, այդ առաջխաղացումը ուրվագծեց ժամանակակից Եվրոպան և Ասիան, որոնց հազարամյա հակամարտությունն էլ դարձավ սլավոնների համար այնքան կարևոր Արևելյան հարցի բովանդակությունը⁴:

Ընդհանուր առնամբ ինչպես Դրիմի պատերազմի ժամանակ, այնպես էլ այժմ Ռուսաստանի համասլավոնական գաղափարախոսությունը մնում է սլավոն եղբայր ժողովուրդների ազատագրման հարցը: Դանիլսկին գտնում էր, որ Ռուսաստանը պետք է ստեղծի Համասլավոնական դաշնություն: Այս միտքը դեռ Դրիմի պատերազմի ժամանակ առաջ էր քաշել Ա. Գերցենը⁵: Սակայն ի տարբերություն վերջինիս, Դանիլսկին ստեղծվելիք դաշնությունը չէր տեսնում միայն հավատակից ու ազգակից ժողովուրդների միավորմանը մեկ պետության մեջ, այլ ավելի առաջ գնալով՝

¹ Տե՛ս Լամանսկի Վ. Ա., Национальности итальянская и славянская в литературном, политическом отношении, Отечественные записки, М. 1864., № 11, с. 185:

² Պիպին Ա. Ի., Панславизм в прошлом и настоящем, «Вестник Европы», 1878., № 12, с., 777.

³ Տե՛ս Դанилевский Ն. Յ., Россия и Европа. Взгляд на культурные и политические отношения Славянского мира к Германо-Романскому, М. 2003., с. 386:

⁴ Տե՛ս Соловьев С. М., История падения Польши. Восточный вопрос. М. 2003., с. 307:

⁵ Տե՛ս Գերцен Ա. Ի., Собрание сочинений и писем., под. ред. М. Лемке, т. 8, с. 56:

հունգարներին նույնպես դիտում էր այդ միավորման մեջ՝ ասելով, որ նրանք պետք է ծովական համասլավոնական աշխարհում: Իսկ նոր միության մայրաքաղաք պետք է դառնար Կոստանդնուպոլիսը: Այն ուղղափառության կենտրոնն էր, և նոր ռազմավարական ու տնտեսական դիրքը շատ հարմար էր¹: Այստեղ պետք է նկատենք, որ համասլավոնական գաղափարախոսության մեջ արդեն ընդգծվում են բռնության տարրեր, քանի որ ծրագրվում էր իրենց ենթարկել և ծովել ոչ ազգակից ժողովուրդներ:

Փիլիսոփա և դիվանագետ Կ. Ն. Լեոնտևը, որը նույնպես համասլավոնական գաղափարախոսության կրող էր, Դանիլևսկու հետ այս հարցում համամիտ չէր: Ըստ նրա հնարավոր չէր քաղաքականապես կիրառելի դարձնել ալավոնական դաշնության գաղափարը, քանի որ սլավոնները գերմանացիների նման չեն կարող միավորվել, «սակայն քաղաքական համասլավոնականության հետ պետք է հաշվի նստեն բոլորը. ավստրիացիները, բուլղարը, գերմանացիները և մենք, քանի որ միայն իր գոյության փաստով ներառում է համաեվրոպական անհասկանալի իրականության այն սուր (հզոր) քայլը, որ բոլորը անվանում են ժողովորդավարական առաջընթաց»²: Փաստորեն մի կողմից դեմ լինելով Եվրոպական սահմանադրականությանը³, մյուս կողմից՝ Լեոնտևը փորձում էր համահունչ քայլել Եվրոպայի հետ հանուն գաղափարի իրականացման:

Դանասլավոնական գաղափարներով տարված էր նաև Մ. Բակումինը, որը 1862 թ. «Ռուս, լեի և բոլոր սլավոն բարեկամներին» ուղղված նամակում կոչ է անում հեղափոխության և ստեղծել համասլավոնական դաշնային կառավարման համակարգ՝ առանց թագավորի⁴:

Սակայն համասլավոնականության գաղափարախոսները գտնում էին, որ մինչ ռոմանա-գերմանական քաղաքակրթության հետ պայքարի մեջ մտնելը պետք է լուծել մի շատ կարևոր հարց, որը խանգարում էր հենց երկրի ներսում սլավոններին միավորվելու. դա Լեհական հարցն էր:

Լեհական հարցի արմատները ծգվում էին մինչև Ռեչ Պոսպոլիտայի բաժանման ժամանակները: 1830-1831 թթ. ապստամբությամբ լեհերը ցանկանում էին թոթակել ռուսական տիրապետությունը: Այս ապստամբության պարտության հետևանքով լեհ քաղաքական վտարանդիները ստվարացան Արևմուտքում և բուռն գործունեություն ծավալեցին ցարական կառավարության դեմ: Լեհ վտարանդիները ստեղծեցին տարարնույթ կազմակերպություններ, որոնց հովանավորում էին անգլիական և ֆրանսիական կառավարությունները⁵:

Լեհական հարցը նորից սրվեց Ռուսական կայսրությունում Ալեքսանդր Երկրորդի կառավարման տարիներին: Ռուսաց նոր ցարը 1856 թ. մայիսին մեկնեց Վարշավա, ելույթ ունեցավ տեղի քաղաքապետարանում և խոստացավ ներում շնորհել 1830-1831 թթ. ապստամբության մասնակիցներին: Միաժամանակ զգուշացրեց, որ հարկ եղած դեպքում կարող է ավելի խիստ պատժել: Լեհական քաղաքականությունում Ալեքսանդր Երկրորդը զնաց զիջումների, ավելին, նա անգամ թույլատրեց աքսորից վերադարձներին անցնել պետական ծառայության: 1858 թ. Լեհաստանում սկսե-

¹ Տես Դаниլևский Н. Я., նշվ. աշխ. էջ, 360:

² Леонтьев К. Н., Восток, Россия и Славянство., М. 1996., с. 235.

³ Տես Լеонтьев К. Н., Дипломатические донесения, письма, записки, атчеты (1865-1872). М. 2003., с. 461:

⁴ Տես ՀԱՐՓ, Փ. 109, ս/ա, օն. 1. դ. 367., լ. 7:

⁵ Տես ՀԱՐՓ, Փ. 109, ս/ա, օն. 1. դ. 145., լ. 12:

ցին գործել 1815 թ. սահմանադրության մի շարք հոդվածներ¹: Այս փոփոխությունները որոշակի աշխուժություն առաջացրին լեհական հասարակական-քաղաքական կյանքում, սակայն լեհ ժողովուրդը, միևնույն է, առաջնորդվում էր իր ազգային-ազատագրական գաղափարներով:

1860-62 թթ. Լեհաստանում իրադրությունն ավելի սրբեց և 1863 թ. հունվարի 10-ի լույս 11-ի գիշերը լեհերը դիմեցին գինված ապստամբության, որը նպատակ ուներ հասնել Լեհաստանի լիակատար անկախության: Ապստամբության ընթացքը և պատմությունը մեր ուսումնասիրության շրջանակներից դուրս է, այդ իսկ պատճռով չենք անդրադարձում մանրամասներին:

1861 թ. լեհական ազատագրական շարժման վերելքի հետ կապված, ոռուսական հասարակության մեջ թեժ քննարկումներ սկսվեցին Լեհաստանի ապագայի վերաբերյալ: Ոռուսական կայսրությունում լեհական հարցն այնքան մտահոգիչ էր, որ իր սրությանը հավասարագոր էր գյուղացիական հարցից²:

1863 թ. լեհական ապստամբությունը ոռուսաց հասարակությունում առաջացրեց տարաբնույթ կարծիքներ: Անգամ առաջադիմական հայացքների տեր բազմաթիվ գործիչներ գտնում էին, որ Լեհաստանը Ռուսական կայսրության անբաժանելի մասն է կազմում և հետևաբար անկախության իրավունք չունի: Այդ էր պատճառը, որ Լեհական ապստամբության նկատմամբ ռուս հասարակության վերաբերմունքը մեծմասամբ բացասական էր: Իհարկե, կային գործիչներ, որոնք իրենց համակրանքն էին հայտնում լեհ ժողովրդի արդար պայքարի հանդեպ և քննադատում էին ռուսական կառավարության պատժի գործողությունները Լեհաստանում:

Լեհական հարցում սլավոնաֆիլները մինչև ապստամբությունը ավելի հանդուրժող էին և իրենց գնահատականներում՝ ավելի մեղմ: Նրանք ռուս-լեհական հակամարտության մեջ տեսնում էին ռուսական և Եվրոպական աշխարհների հակադրությունը: Սակայն, միաժամանակ, գտնում էին, որ հարցը ներսւավոնական բնույթ ունի: 1861 թ. Ի. Ալեքսակովը Լեհաստանի անկախացնան կողմնակից էր: Նա առաջարկում էր Լեհաստանից դուրս բերել ռուսական գործերը: Սակայն Լեհաստանի անկախությունը չպետք է լիներ ի հաշիվ բելոռուսական և ուկրաինական հողերի: Արդեն ապստամբության ժամանակ Ի. Ալեքսակովի հայացքներում նկատվում է փոփոխություն: Նա պահանջում էր, որ ապստամբությունը արագ ճնշվի, հակառակ դեպքում այն կրավանցի Ռուսաստան: Այսպես, Ի. Ալեքսակովի կողմից իրատարակվող «Դեն» թերթը դարձավ ռուսական մեծապետական գաղափարների քարոզչության կարևոր խոսափող: Լուսավորության նախարար Գոլովչինը երրորդ բաժանմունքի պետ իշխան Պոլգրուկովին գրած նամակում ասում էր, որ սլավոնաֆիլների «Դեն» թերթը լեհական հարցում դարձել է կառավարության ամուր հենարանը³:

Ապստամբության տարիներին լույս տեսավ ռուս պատմաբան Ս. Մ. Սոլյովյովի «Լեհաստանի անկան պատմությունը» աշխատությունը: Ներկայի տեսակետը լեհական հարցի լուծման գործում ոչնչով չէր տարբերվում պաշտոնական տեսանկյունից: Ըստ նրա Արևելյան Եվրոպայում Լեհաստանը կարողիկ քաղաքակրթության հենարանն է և նրա նպատակն էր տարածել «լատինականությունը»: Լեհ հոգևորականությունն էլ իր գործումներությունը ուղղում էր ռուսաց ուղղափառ եկեղեցու դեմ: Լե-

¹ Տես Այրառետօն, Внешняя политика Российской империи 1801-1914, М. 2006, с. 238-239:

² Տես ГАРФ, Ф. 109 с/а4а, д. 405, л. 1:

³ Տես Цымбаев Н. И., И. С. Аксанов в общественной жизни преобразованной России, М. 1978., с. 109:

հական ազգային-ազատագրական շարժումը մշտապես ջերմ աջակցություն էր ստանում Արևմուտքում: Այս ամենն ըստ Սոլովյովի ուներ մեկ նպատակ՝ թուլացնել Ռուսաստանը և բաժանել սլավոնական աշխարհը: Սոլովյովն անգամ զարմանում է լեհերի ապերախտության վրա, քանի որ ըստ նրա, Լեհաստանի մի մասն ընդգրկվելով կայսրության կազմում՝ փրկվեցին գերմանացումից: «Ավագ եղբոր նկատմամբ» ատելություն սերմանողներին նա փնտրում է լեհ հոգևորականության և շյախտայի մեջ¹:

Այս նույն տեսակետում է հոլովում նաև համալավոն Ն. Յա. Դանիլկավին: Նա Լեհաստանը համարում էր սլավոնական ընտանիքի վտանգավոր անդամ, երկիր, որն ունեցել է ոչ կարևոր պատմություն: «Լեհաստանը սլավոնական այն երկրներից միակն էր, որ արևմտյան հոգևոր արժեքներն ընդունեց առանց պայքարի և դրանք յուրացրեց»²: Ըստ Դանիլկավու Ռուսաստանը անհրաժեշտության դեպքում պետք է դիմի ռազմական միջամտության՝ թույլ չտալով Լեհաստանին ընկնել Գերմանիայի ազդեցության տակ, որի վտանգն էլ նրա անկախությունն էր: «Եթե Լեհաստանը ձեռք բերի անկախություն, անկասկած կդառնա հեղափոխական խարդավանքների կենտրոն, որոնք կուղղվեն դեպի Ռուսաստանի արևմտյան նահանգները»³: Այսպիսով, Լեհաստանի անկախության ձգտման դեմ պայքարելով՝ համալավոնականները կանխում էին հեղափոխության վտանգը:

Ռազմական գործիչ, համալավոն Ռ. Ֆադեևը գտնում էր, որ լեհական խնդիրը կապված է սլավոնական հարցի հետ: Ըստ Ֆադեևի լեհական հարցը թշնամի երկըքները սրի ննան պահել են ձեռքերում, որպեսզի հարկ եղած դեպքում խոցեն Ռուսաստանին: Նա Լեհաստանը դիտարկում է որպես կանուրզ Ռուսաստանի և սլավոնական ժողովուրդների միջև, ուստի Արևմուտքը փորձում է ամեն կերպ շիկացնել իրավիճակը: Լարված մթնոլորտի առկայությունը Լեհաստանում Արևմուտքի գլխավոր գենքն է⁴:

Ռուսական ներքաղաքական կյանքում կային գործիչներ, որոնք տրամադրորեն հակադիր կարծիքի էին, ինչի հետևանքով էլ նրանց գործունեությունը հայտնվել էր պետական հատուկ մարմնների ուշադրության կենտրոնում: Այդ գործիչներն էին վտարանդիրության մեջ գտնվող Ա. Ի. Գերցենը, Ն. Պ. Օգարյովը և Մ. Ա. Բակունինը:

Ա. Գերցենը և Մ. Բակունինը բավական ոգևորված էին Լեհաստանում տեղի ունեցող իրադարձություններով: Նրանք 1863 թ. սկզբին Լոնդոնում Ն. Օգարյովի և Զ. Մաձինիի հետ միասին հիմնեցին Կենտրոնական կոմիտե, որը պետք է իրատարակեր «Слово» թերթը: Խոկ Բակունինին տրամադրվեց 60 հազար ֆրանկ՝ գենք գնելու և լեհ ապստամբներին ուղարկելու համար⁵:

Ռուսական իշխանությունները խիստ անհագստացած էին վտարանդիրության մեջ գտնվողների գործունեությունից և ուշիուշով հետևում էին նրանց գործունեությանը: 1863 թ. գարնանը Լոնդոնում ստեղծվեց ռուս-լեհական կոմիտե կոմս Զամոյսկու և իշխան Չարտորիժսկու գլխավորությամբ: Այս կոմիտեին անդամակցում էին նաև Գերցենը, Օգարյովը և վտարանդիրության մեջ գտնվող մի շարք ռուս ազնվականներ,

¹ Տես Սоловьев С. М., նշվ. աշխ., էջ 185:

² Данилевский Н. Я., նշվ. աշխ., էջ 304:

³ Նույն տեղում, էջ 378:

⁴ Տես Փածեև Р. А., Собрание сочинений. Наш военный вопрос. Восточный вопрос. т. II, часть 2. СПБ. 1889, с. 281:

⁵ Տես ГАРФ, Ф. 109, с/а, оп.1. д. 138., л. 1:

որոնք համագործակցում էին Անգլիայի և Ֆրանսիայի կառավարությունների հետ: Նպատակն էր օժանդակել լեհական ապստամբությանը¹:

Նրանք լեհական հարցի և ընդհանրապես ազգային հարցի լուծումը տեսնում էին համասլավոնական միության ստեղծման մեջ: Այս միությունում բոլորը պետք է լինեին իրավահավասար և պաշտպանեին սլավոնների շահերը: Սակայն այստեղ Ա. Գերցենի և Մ. Բակունինի հայացքներում նկատվում են որոշակի տարբերություններ: Եթե Գերցենն այս ամենի արդյունքում տեսնում էր հեղափոխության սոցիալական բնույթը և տնտեսական գործոններին էր մեծ տեղ հատկացնում², ապա Բակունինը ավելի շատ հակված էր տեսնել լեհերի ազգային իդեոլոգիայի կատարված³ և կտրականապես դեմ էր համասլավոնական միությանը, այդ թվում և Լեհաստանի ռուսականացմանը⁴:

Ա. Գերցենը լեհերի պայքարը օգտակար էր համարում նաև Ռուսաստանի համար: Դիմելով ռուս ժողովրդին՝ նա կոչ է անում. «Միավորքը լեհերի հետ մեր և նրանց ընդհանուր ազատության համար, Ռուսաստանը կքավի իր մեղքերը, և մենք հպարտորեն ու գորովանքով մի օր աշխարհին կհայտարարենք». Լեհաստանն առանց մեզ էլ չէր փոխ, սակայն մենք թերևացրինք նրա ծանր պայքարը»⁵: Ըստ Գերցենի ռուսական իշխանությունները և Լեհաստանի, և Ռուսաստանի հեղափոխականների դեմ նույն մեթոդներով են պայքարում⁶:

Այսպիսով, 19-րդ դարի 60-ական թվականների սկզբին լեհական ապստամբության շնորհիվ Ռուսական կայսրությունում ազգային հարցը հասարակության լայն շերտերի քննարկման առարկա էր դարձել: Մի կողմից՝ ռուսական հասարակության մեջ գլուխ էր բարձրացնում համասլավոնական մեծապետական գաղափարախոսությունը, որի նապատակն էր ծովել կայսրության տարածքում և նրա սահմաններից դուրս ապրող սլավոն ժողովուրդներին ռուս ազգի հովանու ներքո, մյուս կողմից՝ այդ ժողովուրդների պայքարն էր իրենց ինքնությունը պահպանելու համար: Առաջին խոչոր գաղափարական բախումը այս հարցերի շուրջ տեղի ունեցավ լեհական հարցի համատեքստում: Անգամ առաջադեմ հայացքներ ունեցող մտավորականները և հասարակական գործիչները Լեհաստանը պատկերացնում էին միմիայն կայսրության սահմանների տարածքում և լեհական հարցի լուծումը տեսնում էին Լեհաստանի ռուսականացման և լեհ ժողովրդի ծովալման մեջ: Միաժամանակ գոյություն ունեին ավելի սրափ մտածող գործիչներ, որոնք բնակվելով կայսրության սահմաններից դուրս՝ պաշտպանում էին անկախ պետականություն ունենալու լեհ ժողովրդի իրավունքը:

Микаел Мартиросян, Айк Григорян. Польский вопрос и панславизм в России в начале 19-го века 60-х годов - Во второй половине 19-го века в Российской империи укоренялась шовинистская и националистическая идеология панславизма. В 1867 г. Общество любителей естествознаний организовало Всероссийскую этнографическую выставку и одновременно созвало съезд славянских народов, который проводился под непосредственным покровительством правительства. На Санкт-

¹Տես ՀԱՐՓ, Փ. 109, ս/ա, օն.1. ձ. 145., լ. 11-12:

²Տես Գերցեն Ա. Ի., Հոգ. Սոց., Մ., թ. 16, 1959., ս. 250:

³Բակունին Մ. Ա., Հայոց հայության համար առաջադեմ հայացքներ ունեցող մտավորականները:

⁴Նույն տեղում, էջ 41:

⁵Գերցեն Ա. Ի., Հոգ. Սոց., թ. 12., ս. 93:

⁶Տես Գերցեն Ա. Ի., Հոգ. Սոց., թ. 17., ս. 26:

Петербургском съезде в знак протesta не участвовали поляки, у которых в памяти были свежие воспоминания о подавлении восстания 1863-1864 гг. В начале 60-х годов 19-го века благодаря польскому восстанию в Российской империи национальный вопрос стал предметом обсуждения для широких слоев общества. Даже интеллигенция с прогрессивными взглядами Польшу представляла только в территории империи и в ассимиляции польского народа. Но одновременно существовали более трезвомыслящие деятели, которые проживая за границей империи, защищали права польского народа иметь независимую государственность.

Michael Martirosyan, Hayk Grigoryan. Polish question and Pan-Slavism in Russia at the beginning of the 1860's - In the second half of the 19th century the ideology of chauvinism and nationalistic Pan-Slavism was rooted within Russian Empire. In 1867, the Society of Natural science lovers of Russia organized all-Russian ethnographical exhibition and also the meeting of Slavic peoples that was held under the aegis of the government.

The Polish people refused to participate in St. Petersburg meeting as they kept in mind the cruel pressure of the rebellion of 1863-1864. In the beginning of 1860's the national problem in Russia became a discussion issue for wide public due to Polish rebellion.

Even intellectuals and public figures with advanced views could imagine Poland only within the frames of the Empire. The salvation of Polish problem was also seen in the russification of Poland and assimilation of Polish people. At the same time, there were sober-minded figures, who lived out of the Empire borders and defended the right of the Polish people to have an independent state.
